Հետևելով աշակերտական խորհրդի գործունեությանը՝ կարելի է ասել, որ այն բարձր մակարդակի վրա է, քանի որ այն իր հերթին մեծապես նպաստում է աշակերտների ուսումնական գործընթացին: Ուսումնական հաստատությունում աշակերտական խորհուրդը գործում է ժողովրդավարության սկզբունքներով, տարվա ընթացքում իրականացնելով ուսումնական տարվա համար նախատեսած բոլոր ծրագրերը: Աշակերտական խորհրդի անդամները դպրոցի սովորողների շրջանում ծավալում են ակտիվ գործունեություն աջակցում են ուսումնական հաստատության ուսումնական որակի բարձրացման, սովորողների միջև ծագած վեճերի լուծման, շաբաթօրյակների կազմակերպման, դպրոցամերձ տարածքների մաքրման գործում:

2021-2022 ուստարվա ընթացքում դպրոցում կազմակերպված միջոցառումները միտված են եղել ապահովելու աշակերտների ներգրավվածությունը, զարգացնելու նրանց ընդհանուր ճանաչողությունը, աշխարհընկալումը՝ ձևավորելով կայուն արժեքային և աշխարհայացքային համակարգ՝ սեփական ինքնությանը հաղորդ:

Իրականացված դաստիարակչական աշխատանքները պլանավորվել են հետևյալ ուղղություններով, դրանք են՝

- Ուսումնադաստիարակչական
- Գեղագիտական
- Ռազմահայրենասիրական
- Ֆիզիկական առողջության
- Քաղաքացիական/բարոյական

Հաշվի առնելով հետևյալ ուղղությունները՝ մշակվել է միջոցառումների տարեկան ժամանակացույց և իրականացվել տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված հիշարժան տոներին, որոնք միտված են եղել աշակերտների բնականոն զարգացմանը:

Այս ուսումնական տարին նշանավորվեց նախ և առաջ աշակերտների մոտ ռազմահայրենասիրական դաստիարակչությանն ուղղված միջոցառումներով.

23.09.2021թ.-ին դպրոցի ամառային այգում 7-րդ <<Ե>> դասարանի աշակերտների մասնակցությամբ կազմակերպվեց ֆլեշմոբ անկախության հռչակման 30-ամյակին նվիրված, որը կրում էր հետևյալ խորագիրը՝ <<Չինայե՛նք մեզ, մեր ջանքը, մեր միտքը, մեր սերը Հայրենիքի համար>>:

/Համագործակցություն կերպարվեստի ուսուցչուհի՝ Կ.Ծատուրյանի հետ /

19.10.2021թ.-ին դպրոցի բակում բացվեց 44-օրյա պատերազմում կրթօջախի գոհված շրջանավարտների հիշատակին նվիրված հուշաքար: Կազմակերպվեց հիշատակի միջոցառում:

19.11.2021թ.-ին տեղի ունեցավ « Կյանքը պատերազմից հետո » խորագրով համադպրոցական միջոցառում: Համագործակցություն ՀԵՊ-ի ուսուցչուհի Մ.Մխիթարյան հետ/

03.12.2021թ.ին կայացավ հայրենասիրական միջոցառում հետևյալ խորագրով՝

« Հայրենիքս և ես՝ մենք լծորդված ենք իրար, ինչպես հոգի և մարմին, ինչպես նպատակ և միջոց ... » /Դասարան՝ 6-րդ <<Գ>>, համագործակցություն դասուհի Լ.Դավթյանի, երաժշտության ուսուցչուհի Մ.Գրիգորյանի, պարուսույց Ն.Պետրոսյանի հետ/

20.09.2021թ.-ին լրացավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի ծննդյան 113-ամյակը: Այդ կապակցությամբ դպրոցի 9-րդ դասարանի սաները՝ տնօրենի և դասուհիների ուղեկցությամբ, եղան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ծաղիկներ խոնարհեցին Կաթողիկոսի հուշարձանին, լսեցին տնօրեն Գ.Մելիք-Ստեփանյանի խոսքը՝ նվիրված Վեհափառին, հայրենասիրությանը, հայկական արժեքներին:

9-րդ « Ե » դասարանի աշակերտուհի, ԱԽ-ի Մշակութային հանձնախմբի նախագահ Նանե Գրիգորյանը մասնակցեց շարադրության մրցույթի հետևյալ խորագրով՝

« Նրանք ընկան հանուն... » : Դեկտեմբեր ամսին շարադրությունը ճանաչվեց լավագույններից մեկը և արժանացավ մրցանակի:

Ուսումնական հաստատության աշակերտական խորհրդի նախագահի 2021թ.-ի սեպտեմբերի 30-ին կայացած ընտրություններն ամփոփելուց հետո ստացած արդյունքների հիման վրա մեկ ուսումնական տարի լիազորությունների ժամկետով աշակերտական խորհրդի նախագահ ընտրվեց 9-րդ <<Ա>> դասարանի աշակերտ Անդրանիկ Մամվելի Բսոյանը:

08.10.2021թ.-ին կազմակերպվեց Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) 30-ամյակին նվիրված միջոցառում:

/Համագործակցություն աշխարհագրության ուսուցչուհի Ս.Հարությունյանի, երաժշտության ուսուցչուհի՝ Մ.Գրիգորյանի, պարուսույց՝ Ն.Պետրոսյանի հետ/

09.10.2021թ.-ին դպրոցի ուսուցչական կազմը՝ տնօրեն Գ.Մելիք-Ստեփանյանի գլխավորությամբ, ուղևորվեց ուխտագնացության Օձուն և Ախթալա:

22.10.2021թ.-ին 5-րդ «Զ» դասարանը ներկայացրեց Էրեբունի-Երեվանի 2803 ամյակին նվիրված միջոցառում: / Համագործակցություն դասուհի Մ.Մնացականյանի հետ/

30.10.2021թ.-ին տեղի ունեցավ «Կորիզ» համադպրոցական մրցույթի մրցանակաբաշխությունը: Մեր դպրոցը պատվով ներկայացրեցին Գրիգորյան Նանեն և դպրոցի շրջանավարտ Գրիգորյան Արմինեն:

17.11.2021թ.-ին տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված մեծանուն հայ կոմպոզիտոր, դաշնակահար, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր Առնո Բաբաջանյանի ծննդյան 100 ամյակին: /Համագործակցություն պարուսույց Ն.Պետրոսյանի հետ/

22.11.2021թ.-ին անցկացվեց <<Մաթեմատիկա>> առարկայի օլիմպիադայի դպրոցական փուլը:

24.11.2021թ.-ին անցկացվեց «Սպորտլանդիա», որին մասնակցեցին 8-րդ «Ա» և 8-րդ « Ե » դասարանի աշակերտները: Սպորտլանդիայի նպատակն էր բացահայտել աշակերտների ֆիզիկայան պատրաստվածությունը, զարգացնել ուշադրությունը,

արագաշարժությունը, հավասարակշռությունը, ճարպկությունն ու ճկունությունը:
/Ուսուցչուհի՝ Ս.Կարապետյան/

24.11.2021թ.-ին անցկացվեց <<Կենսաբանություն>> առարկայի օլիմպիադայի դպրոցական փուլը:

24.11.2021թ.-ին 9-րդ դասարանցիները հանդիպեցին լուսանկարիչ Արեգ Բալայանի հետ: Աշակերտները ծանոթացան լուսանկարչի ստեղծագործական կյանքին, գործունեությանը, զրուցեցին մասնագետի հետ և ստացան նաև մասնագիտական խորհուրդներ:

26.11.2021թ.-ին անցկացվեց <<Աշխարհագրություն>> առարկայի օլիմպիադայի դպրոցական փուլը:

29.11.2021թ.-ին դպրոցի աշակերտական խորհրդի նախագահ Անդրանիկ Իսոյանը և փոխնախագահ Մանե Զանգյանը Երևանի Ռաֆայել Իշխանյանի անվան թիվ 153 հիմնական դպրոցում մասնակցեցին «Աշակերտական խորհրդի կարողությունների զարգացում» դասընթացին:

29.11.2021թ.-ին անցկացվեց <<Ֆիզիկա>> առարկայի օլիմպիադայի դպրոցական փուլը: 4-րդ դասարանի աշակերտները կազմակերպեցին ցուցահանդես «Ոսկե աշուն» խորագրով: Աշակերտները ցուցահանդեսին ներկայացրել էին փայտից, ճյուղերից, տերևներից, պտուղներից պատրաստած բնական նմուշներ:

Ցուցահանդեսի նպատակն էր ցույց տալ երեխաների տաղանդը, աշխատանքը, պատկերացումները և ակտիվությունը:

01.12.2021թ.-ին անցկացվեց <<Քիմիա>> առարկայի օլիմպիադայի դպրոցական փուլը:

08.12.2021թ.-ին 2-րդ «Ա» դասարանի աշակերտները հրաժեշտ տվեցին աշնանը /Համագործակցություն դասվար Ա.Դարբինյանի, երաժշտության ուսուցչուհի Ս.Հարությունյանի, պարուսույց Ն.Պետրոսյանի հետ/

Կրտսեր դպրոցում կազմակերպվեց ընթերցանության, ասմունքի և վայելչագրության մրցույթներ: Հաղթող ճանաչված աշակերտներին տնօրեն Գ.Մելիք-Ստեփանյանը հանձնեց շնորհակալագրեր:

17.12.2021թ.-ին 5-րդ «Ե» դասարանի սաները հանդես եկան ամանորյա գեղեցիկ միջոցառմամբ, երաժշտական ու պարային կատարումներով, բեմականացմամբ:

/Համագործակցություն դասուղեկ Մ.Հակոբյանի, երաժշտության ուսուցչուհի Յ.Հայրապետյանի, պարուսույց Ն.Պետրոսյանի հետ/

Ամանորի հեքիաթային պատմությունների շարքը դպրոցի գեղեցիկ նախասրահում շարունակեցին 1-ին <<Բ>>, <<Դ>>, 2-րդ <<Գ>>, <<Ե>>, <<Զ>> դասարանների աշակերտները:

31.01.2022թ.-ին մեր կրթօջախում անցկացվեց դպրոցականների «Հայոց լեզու» առարկայի օլիմպիադայի մարզային փուլը:

03.02.2022թ.-ին դպրոցի նախասրահում կազմակերպվեց ցուցահանդես՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման 30-ամյակին: /Համագործակցություն նկարչության ուսուցչուհի Կ.Ծատուրյանի հետ/

10.02.2022թ.-ին մեր դպրոցում Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի («ԿԶՆԱԿ») հիմնադրամի կողմից կազմակերպվեց

«Ընթերցանությունը տարրական դպրոցում» ծրագրի՝ Երևանի դպրոցների 5րդ խմբի վերապատրաստումը: Վերապատրաստմանը մասնակցեցին 131, 122, 110, 143 և 168

դպրոցների տնօրենները, ուսումնական գծով տնօրենի տեղակալները, ՄԿԱ գծով փոխտնօրենները, ԴԱԿ - երը, գրադարանավարները, տարրական դասարանների մեթոդավերաման նախագահները և 2-րդ դասարաններում դասավանդող դասավարները: 14.02.2022թ.-ին մեր կրթօջախում հանդիսավոր կերպով նշվեց Տեառնընդառաջը:

Հանճարեղ լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվա և մեր իրականության մեջ գեղեցիկ ավանդույթ դարձած գիրք նվիրելու օրվա առիթով 1-ին <<Ա>>, 2-րդ <<Բ>>, 3-րդ <<Ա>>, <<Բ>>, <<Գ>> դասարանների աշակերտները՝ դասավարների հետ միասին, գրադարանում մասնակցեցին « Ամեն ինչ գրքի մասին » խորագրով փոքրիկ միջոցառմանը, որից հետո աշակերտները միմյանց գիրք նվիրեցին և կարևորեցին գրքի դերն իրենց կյանքում: /Գրադարանավարուհի՝ Ս.Պողոսյան/

21.02.2022թ.- ին մեր կրթօջախում անցկացվեց բաց դաս նվիրված Մայրենիի միջազգային օրվան:

Դասի խորագիրն էր. «Հայեցի խոսք և հայեցի դաստիարակություն» :/Դասարան՝ 7-րդ «Բ» , ուսուցիչ՝ Հ.Հովհաննիսյան, դասղեկ՝ Ա.Բաբաջանյան/

02.03.2022թ.-ին դպրոցի նախասրահում ցուցադրվեց «Գարնանամուտ» խորագիրը կրող ցուցահանդեսը: Ցուցահանդեսին ներկայացված էին 3-րդ « Ա » դասարանի աշակերտների յուրատիպ աշխատանքները: /Համագործակցություն կերպարվեստի ուսուցչուհի Գ.Երեմյանի հետ/

07.03.2022թ.-ին մեր շնորհաշատ աշակերտները դպրոցի նախասրահում գեղեցիկ անակնկալ մատուցեցին տնօրենությանը, ուսուցիչներին և ծնողներին՝ հանդես գալով շնորհավորանքներով, բարեմաղթանքներով, ասմունքով, երգով ու պարով: Իրենց գեղեցիկ ելույթով հանդես եկան նաև Խաչատուր Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի ուսանող-պրակտիկանտները: /ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ՝ Ա.Մովսիսյան, ԴԱԿ՝ Ս.Գալստյան, երաժշտության ուսուցչուհիներ՝ Ս.Հարությունյան, Յ.Հայրապետյան, պարուսույց՝ Ն.Պետրոսյան/

04.03.2022 թ.-ին դպրոցում անցկացվեց մրցույթ-վիկտորինա « Կենսաբանություն » առարկայից, որին մասնակցում էին 9-րդ դասարանցիները:

Մրցույթի նպատակն էր ստուգել աշակերտների ձեռք բերած գիտելիքների մակարդակը, խրախուսել բարձր առաջադիմություն ցուցաբերած աշակերտներին: /Կենսաբանության ուսուցչուհի՝ Ա.Վարդանյան/

09.03.2022թ.-ին տեղի ունեցավ «Հայոց թագուհիները» խորագրով միջոցառում:

8 - րդ « Ա » դասարանի աշակերտները ներկայացրեցին այն թագուհիներին, որոնք մշտապես մասնակից են եղել երկրի կարևոր ձեռնարկումներին, եղել են բարեպաշտ, հայրենապաշտ ու աստվածավախ կանայք, զարմանալի զորավարներ և բարձրաճաշակ կառուցողներ: Միջոցառման 2-րդ մասը նվիրված էր մայրերին, և աշակերտները հանդես եկան մայրերին նվիրված բանաստեղծություններով, երգերով և երախտիքի խոսքերով: /Համագործակցություն 8-րդ «Ա» դասարանի դասղեկ և պատմության ուսուցչուհի Ն. Գևորգյանի հետ/

18.03.2022 թ.-ին 8-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ կազմակերպվեց «Ճանաչենք Թումանյանին» խորագրով վիկտորինա, որի ընթացքում մանրամասն ու հետաքրքիր տեղեկություններ հաղորդվեց մեծն Բանաստեղծի կյանքի, գործունեության, զավակների, ծննդավայրի, ուսման, ընկերական շրջապատի, զվարճալի ու հետաքրքիր պատմությունների մասին:

/Համագործակցություն Հ.լեզվի և գրականության ուսուցչուհի Գ.Ստեփանյանի հետ/

29.03.2022թ.-ին դպրոցում անցկացվեց «Ֆրանսիական աքաղաղ» ֆրանսերենի մրցույթը: 29.03.2022թ.-ին դպրոցի հոգեբան Վարդուհի Աղաբեկյանը հանդիպում ունեցավ 6-րդ դասարանների ծնողների հետ և վարեց սեմինար «Դեռահասների զարգացման առանձնահատկությունները» թեմայով:

Սեմինարի ընթացքում քննարկվող թեմաներից էին դեռահասության տարիքում հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, ագրեսիվ վարքի հիմնական աղբյուրները, մեծահասակների և դեռահասների հարաբերություններում ծագող դժվարությունները և հաղթահարման ուղիները:

Աշխատանքներ են տարվել աշակերտների կարգապահության, հաճախումների և ուսումնական առաջընթացի բարելավման ուղղությամբ: Սահմանվել է վերահսկողություն անհարգելի բացակայությունների նկատմամբ:

Դպրոցը սպասարկող անչափահասների գործերով տեսուչի հետ համատեղ պարբերաբար կազմակերպվող քննարկումների միջոցով իրականացվել է աշխատանք երեխաների մոտ վնասակար սովորությունների կանխարգելման և վերահսկման ուղղությամբ:

Սովորողների ազատ ժամանցը կազմակերպելու նպատակով ծնողական խորհուրդների հետ միասին իրականացվել են ուսումնական այցեր և նպատակային էքսկուրսիաներ, այցելելով պատմամշակութային վայրեր՝ նախապես հաստատելով համապատասխան երթուղի և պատասխանատու անձանց:

Աղյուսակ 32. Տվյալներ դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021– 2022
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ.	12%	55 25%	ուստա րի 50 20%

<p>Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի, ժողովների և այլնի թիվը</p> <p>Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու և նմանատիպ առաջարկների թիվը</p>	97	110	150	
<p>Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը 1 ուստարվա ընթացքում</p> <p>Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից աջակցություն ստացող սովորողների տոկոսը տվյալ ուստարում</p> <p>Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների տոկոսը.</p> <p>Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են http://www.dasaran.am, http://ktak.am, http://www.armedu.am, http://forum.armedu.am/, http://lib.armedu.am, և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության</p>	11	11	12	
<p>Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները</p>				
<p>Նկարագրել վերջին 3 տարում սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունները</p> <p>Ծնողական խորհուրդը առաջարկել է օգնել դպրոցում սովորող սոցիալապես անապահով, Արցախից եկած աշակերտներին</p>	<p>Ամսաթիվ</p> <p>2020-2021</p> <p>2021-2022</p>	<p>Առաջարկների քննարկմանը մասնակից ծնողների թիվը</p> <p>47</p> <p>55</p>	<p>Մեկնարկներ</p> <p>---</p>	<p>Մեկնարկներ</p> <p>Մեկնարկներ</p> <p>Արցախից եկած</p>

					աշակ երտն երին օգնել է աշակ երտ ակա ն հագո ւստո վ, ինչպ ես նան այլ անհր աժեշ տ պար ագա ներո վ
Ծնողական խորհուրդը առաջարկել է դպրոցի բակում հուշարձան կանգնեցնել՝ նվիրված 2020թ.-ի պատերազմում զոհված զինվորների հիշատակին	2020-2021	47		-----	-----
	Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումները՝ (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն, մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը				
Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները	Ամսաթիվ	Մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը			Ծնող ակա ն ներդ րումն

1. Կազմակերպվել են այցեր Տիկնիկային թատրոն	Ուստարվա ընթացքում	90 50%		երի չափը 100%
2. Կազմակերպվել են այցեր տուն-թանգարաններ, Կոմիտասի պանթեոն Պատմության թանգարան, Բնության թանգարան, Մատենադարան, Ճանաչողական էքսկուրսիաներ մշակութային այլ օջախներ, Կոմիտասի պանթեոն	Ուստարվա ընթացքում	90 60%		100%
3. Գործնական աշխատանք <<Դեռահասների առողջ ապրելակերպը և հիգիենան>> թեմայով (8-րդ դասարան)	14.05.2022	10 1.3%		0%
4. Գիտելիքի օր, ինչպես նաև տարբեր թեմատիկ ցերեկույթներ	Ուստարվա ընթացքում	70 90%		Օգնել կազմ ակեր պչակ ան հարց երում , դահլ իճի ձևավ որմա ն և էսթե տիկ այի պահ պան ման հարց ում

		<p>Ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները</p>	<p>Ամսաթիվ</p>	<p>Առաջարկությունների քննարկմանը մասնակից ծնողների թիվը և ուսուցիչներին թիվը</p>			<p>Մեկնաբանություններ</p>
<p>Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից ուսուցիչներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները</p>			<p>----</p>	<p>----</p>			<p>----</p>
		<p>Ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը</p>					
<p>Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը</p>			<p>Ամսաթիվ</p>				<p>Մեկնաբանություններ</p>
<p>Ծնողագուրկ և սոցիալապես անապահով, ինչպես նաև Արցախից եկած սովորողներին օգնություն ցուցաբերել</p>			<p>2019-2020 2020-2021 2021-2022</p>				<p>----</p>
<p>Բացառել անհարգելի բացակայությունները, դպրոցից երեխային թույլատրել դուրս գալ միայն դասղեկի և ծնողի իմացությամբ</p>			<p>2019-2020 2020-2021</p>				<p>Դասղեկի գրությամբ թույլտվության</p>

<p>Հետևել երեխաների կարգապահությանը, հատկապես բջջային հեռախոսներից օգտվելու կանոններին</p>	<p>2021–2022</p> <p>2019-2020</p> <p>2020-2021</p> <p>2021–2022</p>			<p>թերթիկի առկայություն</p> <p>Մինչև դասի սկսվելը հավաքել կամ անջատել բջջային հեռախոսները</p>
<p>Երաժշտական-գրական ցերեկայինների ընթացքում ծնողների կամավոր աջակցությունը ուսուցչական կազմին</p>	<p>2019-2020</p> <p>2020-2021</p> <p>2021–2022</p>			<p>Մասնագետ ծնողների օգնություն և ներկայություն</p>
<p>Հայրենասիրական դաստիարակություն սերմանել 8-9-րդ դասարանների աշակերտներին՝ այցելություններ կազմակերպելով մոտակա գործարաններ:</p>	<p>2019-2020</p> <p>2020-2021</p> <p>2021–2022</p>			<p>Այցելություն «Շանթ» գործարան</p>
		<p>Ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողներին տրամադարվող աջակցությունը, դրանց ձևերը</p>		

<p>Նկարագրել վերջին 3 տարում ծնողական խորհրդի կողմից հաստատության ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողներին տրամադարվող աջակցության դեպքերը և դրանց ձևը</p> <p>-----</p>	<p>Անսաթիվ</p> <p>---</p>	<p>Ծնողների ներդրված չափը</p> <p>---</p>	<p>կողմից գումարի</p>		<p>Մեկնարանություններ</p> <p>--</p>
		<p>Նկարագրել ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությունը և դրա ձևերը</p> <p>Ծնողական և աշակերտական խորհուրդների համատեղ հանդիպումները տեղի են ունենում ըստ կարգի՝ նոր նախաձեռնությունների քննարկման համար, ծագած հարցերին լուծում տալու, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներին օգնելու նպատակով:</p>			
		<p>Նկարագրել դպրոցի առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը</p> <p>Ծնողական խորհուրդը մշտապես առնչվում է դպրոցի առօրյային, օգնում է դասղեկներին՝ դասարանում ծագած ուսումնադաստիարակչական աշխատանքների հետ կապված խնդիրները լուծելու նպատակով:</p> <p>Ծնողների ներգրավվածությունը. սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին, ներգրավվածության ձևերը</p>			
<p>Նկարագրել արտադպրոցական և արտադասարանական աշխատանքները, որոնց մեջ վերջին 3 տարում ծնողները ներգրավված են եղել</p> <p>1.Շաբաթօրյակներ</p>	<p>Ծնողների մասնակցության ձևերը և մասնակից ծնողների թիվը</p> <p>Ուստարվա ընթացքում</p>	<p>Ծնողների ներդրումների չափը</p> <p>7%</p>		<p>Մեկնարանություններ</p> <p>----</p>	
<p>2. Ծնողների օժանդակությամբ աշակերտները մասնակցել են «Կանաչ մոլորակ» ծրագրի շրջանակներում անցկացվող դասընթացներին</p>	<p>Ուստարվա ընթացքում</p>	<p>40 %</p>		<p>Մեկնարանություններ</p> <p>----</p>	

<p>3. Կազմակերպվել են այցեր տուն-թանգարաններ, Պատմության թանգարան, Մատենադարան, Ճանաչողական էքսկուրսիաներ մշակութային այլ օջախներ</p> <p>4. Կազմակերպվել են ցուցահանդեսներ նկարչություն և տեխնոլոգիա առարկաներից</p>	<p>Ուստարվա ընթացքում</p> <p>Ուստարվա ընթացքում</p>	<p>100%</p> <p>20%</p>			<p>----</p> <p>----</p>
<p>5. Պատրաստել դպրոցի բոլոր աշակերտներին «Օդային տազնապ» արտակարգ իրավիճակում անվտանգության կանոններին</p> <p>6. Գրքերի խնամքին և օգտագործման կանոններին հետևելը, ժամանակին հանձնումը գրադարան</p>	<p>Ուստարվա ընթացքում</p>	<p>----</p> <p>80%</p>			<p>----</p>

Թվարկել կայքերը, որոնցից օգտվում են ծնողները, օրինակ՝ <http://vazgen-a.net> <http://www.dasaran.am>, <http://ktak.am>, <http://www.armedu.am>, <http://forum.armedu.am/>, <http://lib.armedu.am>, <https://e-diary.emis.am> հաստատության կայք և այլն, մեկնաբանել դրանց անհրաժեշտությունը և օգտակարությունը

Կայքը	Ամսաթիվ	Օգտվող ծնողների թիվը		Մեկնաբանություն
<p>1. www.dasaran.am</p>	<p>Ամեն օր</p>	<p>500</p>		<p>Ծնողները իրենց երեխաների գնահատականները և տնային հանձնարարությունները</p>

					երը տեսնել ու համար ամեն օր օգտվու մ են www.dasaran.am կայքից
2. www.ognirdprocid.am 3. www.ktak.am	Անհրաժեշտության դեպքում Անհրաժեշտության դեպքում				Ծնողնե րը օգտվու մ են www.ktak.am կայքից կրթությ անը վերաբե րող նորությ ուններ ին ծանոթ անալու համար
4. https://e-diary.emis.am	Ամեն օր	1500			Ծնողնե րը իրենց երեխա ների գնահա

				<p>տական ներքև և տնային հանձնարարությունները տեսնելու համար ամենօր օգտվում են՝ https://e-mis.am</p>
--	--	--	--	--

Ծնողական խորհուրդը մշտապես բարեխղճորեն կատարել է իր առջև դրված պարտականությունները, աջակցություն է ցուցաբերել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները բարձր հիմքերի վրա դնելու համար:

Աղյուսակ 33. Տվյալներ դպրոցի և համայնքի համագործակցության վերաբերյալ

Ցուցանիշ

Դպրոցի շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնականության բազայի համալրման աշխատանքներին համայնքի մասնակցությունը, մասնակցության ձևը և այդ գործում կատարված ներդրումները.

<p>Նկարագրել վերջին 3 տարում հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնականության բազայի համալրման այլ աշխատանքներին համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևերը</p>	<p>Ամսաթիվ</p>	<p>Ներդրման չափը</p>	<p>Մեկնաբանություն</p>
---	----------------	----------------------	------------------------

1.Աջափնյակ վարչական շրջանի օգնությամբ բարեկարգվել է դպրոցի հարակից ճանապարհը	Ուստարվա ընթացքում	----	
Դպրոցի մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության համայնքի աշխատանքներին մասնակցության դեպքերը և դրանց ձևերը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների և աշխատողների տոկոսը	Մեկնաբանություն
1.Տարհանում	14.10.2019 20.09.2021	95% 95%	
2.Ծառատունկ	01.10.2021 25.04.2022	40% 60%	
Դպրոցի կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները.			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատության կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված միջոցառումները, նշել դրանց թիվը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների և աշխատողների տոկոսը և համայնքի բնակիչների թիվը	Մեկնաբանություն
1.<<Էրեբունի Երևան>> տոնակատարությունը	11.10.2019 -----	95% -----	----
2.«Աշխարհի մայրեր» կանանց տոնին նվիրված միջոցառում	07.04.2022	50% 90	----

3. «Քրիստոս հարյավ ի մեռելոց» համադպրոցական միջոցառում	15.04.2022	50% 85	----
Համայնքի բնակիչները օգտվում են դպրոցի մարզադահլիճից, ինտերնետից, գրադարանից և այլ հնարավորություններից			
Նկարագրել, թե հաստատության ինչպիսիծառայություններից են օգտվում համայնքի բնակիչները -----	Հաճախականությունը՝ ամսեկան կամ տարեկան կտրվածքով -----	Օգտվող բնակիչներ ի թիվը ----	Մեկնաբանություն ----
Դպրոցի կողմից հասարակական կազմակերպությունների(ՀԿ) հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակից սովորողների թիվը՝ ըստ ծրագրերի			
Նկարագրել վերջին 3 տարում հաստատությանը և ՀԿ-ների համատեղ իրականացված կրթական բոլոր ծրագրերը	Ծրագրի տևողությունը	ՀԿ –ի անվանումը	Մասնակից սովորողների թիվը
«Հանդուրժողականություն» Հանդիպում ԱԻՆ-ի աշխատակիցների հետ	2021-2022 ուստարի 2021-2022 ուստարի	«Կարմիր Խաչի» միջազգային կազմակերպության հետ համագործակցությ ուն ԱԻՆ	600 700
--	--	--	--

Մաս 6. Դպրոցի հիմնախնդիրները, դրանց հաղթահարման ուղիները, ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները

Այս մասում հաստատությունը պետք է ամփոփի նախորդ (1-ից 5-րդ) մասերում կատարված մանրամասն ինքնավերլուծությունը՝ ընդհանրացնելով իր ուժեղ և թույլ կողմերը(հիմնախնդիրները) և նշելով հաստատության հնարավորություններն(հեռանկարները)ու հնարավոր վտանգները(ոլիսկերը): Այլ կերպ ասած հաստատությունը պետք է կատարի ՈԻԹՉՎ վերլուծություն ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ (SWOT Analysis-Strengths, Weaknesses, Opportunities, and Threads):

ՈւԻԹՀՎ վերլուծությունը գործիք է, որը հնարավորություն է ընձեռում դեկավարությանը, ուսուցիչներին և մյուս աշխատակիցներին միասնաբար վերլուծել և հասկանալ հաստատության գործունեության ուժեղու թույլ կողմերը, արդյունավետ կամ ոչ արդյունավետ գործառույթները, ինչպես նաև հեռանկարները՝ ռազմավարական զարգացման ծրագրի մշակման նպատակով: Այն նաև անհրաժեշտ գործիք է առկա հիմնախնդիրների ու մարտահրավերների և դրանց լուծման ուղիների համակարգված ձևակերպման համար: Ըստ էության ՈւԻԹՀՎ վերլուծությունը հաստատության կողմից կարող է կիրառվել ցանկացած պլանավորման, այդ թվում՝ ֆինանսական կամ ապագայի համար որոշումների կայացման գործընթացներում: Սահմանումներ

- ուժեղ կողմեր՝ գործոններ, որոնք ունեն կամ կարող են ունենալ ունենալ դրական ազդեցություն հաստատության նպատակների իրագործման վրա և նպաստել դրանց իրականացմանը.
- թույլ կողմեր՝ գործոններ, որոնք ունեն կամ կարող են ունենալ բացասական ազդեցություն հաստատության նպատակների իրագործման վրա և խոչընդոտել դրանց իրականացումը.
- հնարավորություններ՝ այնպիսի արտաքին գործոններ, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ հաստատության նպատակների իրագործման վրա, սակայն նախկինում հաշվի չեն առնվել.

• վտանգներ՝ արտաքին գործոններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ հաստատության նպատակների իրագործման վրա կամ դարձնել դրանք անհասանելի: Ցանկացած պլանավորման գործընթացից կամ վերլուծության անցկացումից առաջ հաստատությունը պետք է հստակ սահմանի իր տեսլականը և նպատակները՝ ի՞նչ նվաճումներ ու ձեռքբերումներ պետք է ունենա հաստատությունը և ի՞նչ հիմնախնդիրներ այն պետք է լուծի: Հաստատությունը պետք համոզված լինի, որ նախանշված նպատակները ընդհանուր են բոլոր շահառուների համար՝ հաստատության վարչական կազմի, ուսուցիչների, սովորողների, ծնողների և այլն:

ՈւԻԹՀՎ վերլուծությունն իրականացվում է մի քանի փուլով՝

1. նպատակների համատեղ սահմանում.
2. ամբողջական տվյալների ու տեղեկատվության հավաքն գրառում.
3. տեղեկատվության համապարփակ վերլուծություն և համակարգում՝ ըստ ՈւԻԹՀՎ վերը նշված 4 ուղղությունների (ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ և վտանգներ)
4. առաջնահերթությունների որոշում՝ շարժվելով ամենակարևոր նպատակներից և առաջնային խնդիրներից դեպի ավելի քիչ կարևորները կիսուսափելով ոչ իրատեսական, խիստ հավակնոտ նպատակադրումներից: դրաց անորոշ ձևակերպումներից:

«Կարևոր է չանտեսել թույլ կողմերն, առկա հիմնախնդիրները և չթերագնահատել վտանգները, քանի որ դրանք վաղ թե ուշ կհիշեցնեն իրենց մասին, ընդ որում այն ժամանակ, երբ

կպատճառեն առավելագույն վնասը: Այս վերլուծության նպատակն է ոչ թե անմիջապես վտանգների հաղթահարման ուղղությամբ անհնարին քայլեր ձեռնարկել, այլ մշտապես ունենալ

դրանք տեսադաշտում և հնարավորության սահմաններում փորձել խուսափել դրանցից : Որոշակի առումով վտանգների գնահատումը և հաղթահարումը կապված է ռիսկի գործոնի հետ»: (2010, Մայք Մորիսոն).

Այսպիսով, նախորդ 1-ից 5-րդ մասերում սահմանված ցուցանիշներինն չափանիշներին հաստատության համապատասխանությանմանրամասն ինքնավերլուծության հիման վրա անհրաժեշտ է սահմանել՝

- հաստատության առաքելությունը՝ նպատակը, որն անփոփոխ է տվյալ ժամանակահատվածի համար (միջնաժամկետկամ երկարաժամկետ).
- հաստատության առաջնահերթ նպատակները տվյալ ժամանակահատվածի համար (միջնաժամկետ կամ երկարաժամկետ)

- որոշել նպատակներից բխող խնդիրները և միջոցառումները:
- Այնուհետ առաջարկվում է լրացնել ՈԻԹՀՎ վերլուծության ստորև բերված Աղյուսակ 34-ը

Աղյուսակ 34. ՈԻԹՀՎ վերլուծության

<i>Ուժեղ կողմեր</i>	<i>Թույլ կողմեր</i>
<p>1. Աշխատակազմ՝ տարանջատելով վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմը</p> <ul style="list-style-type: none"> • Դպրոցում ամենօրյա վերահսկողություն է կատարվում վարչական աշխատողների կողմից: Դպրոցում իրականացվում է. <p>-ուշացումների վերահսկողություն</p> <p>-աշակերտների սանիտարահիգիենիկ պայմանների պահպանումը</p> <p>Վարչական աշխատողների տեսադաշտում է ուսուցիչների կողմից դասապրոցեսի լիարժեք և նպատակային օգտագործումը:</p> <ul style="list-style-type: none"> • Ուսուցիչները ուսումնադաստիարակչական աշխատանքները բարձր հիմքերի վրա դնելու համար դասապրոցեսի ընթացքում կիրառում են ժամանակակից մեթոդներ՝ դասը հազեցնելով տարբեր գննական պարագաներով: Չավորոշիչների համապատասխան հետևողական աշխատանք է կատարվում աշակերտների ճիշտ գնահատման և ուսումնամեթոդական ձեռնարկներում եղած նորույթները կիրառելու համար: Բոլոր ուսուցիչները ունեն 	<p>1. Աշխատակազմ՝ տարանջատելով վարչական, ուսումնաօժանդակ և ուսուցչական կազմ</p> <ul style="list-style-type: none"> • Սկսնակ ուսուցիչների մոտ պակասում է մանկավարժական փորձը: <p>2. Սովորողներ</p> <ul style="list-style-type: none"> • Սովորողները պետք է ավելի պատասխանատու լինեն իրենց պահվածքի նկատմամբ՝ հետևելով դպրոցական և դասարանական կարգ ու կանոնին: <p>3. Ծնողներ, համայնք, կառավարման խորհուրդի, այլ մարմիններ</p> <ul style="list-style-type: none"> • Ճիշտ կլիներ, որ ծնողները որքան հնարավոր է դասերի ընթացքում բջջային հեռախոսներ չտան երեխաներին: • Ծնողները պետք է լինեն հետևողական, որ աշակերտը դպրոց ներկայանա աշակերտին վայել հազուստով:

մասնագիտական բարձրագույն կրթություն և մասնագիտական հմտություններ:

2. Սովորողներ

Բոլոր դասարաններում կան ակտիվություն ցուցաբերող և գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտներ, որոնք անհրաժեշտության գեպքում օգնում են թույլ կարողություն ունեցող, չառաջադիմող աշակերտներին: Աշակերտներից շատերը նեցուկ են լինում ծնողագուրկ, սոցիալապես անապահով աշակերտներին: Յուրաքանչյուր դասարանում կա աշակերտական ուժեղ կորիզ, որը օգնում է բոլոր դասարաններում դաստիարակչական աշխատանքները կայունացնելու համար:

3. Ծնողներ, համայնք, կառավարման խորհուրդ, այլ մարմիններ

- Ծնողական համայնքը, կառավարման խորհուրդը աշխատում են համատեղ և համագործակցված*
- Աշակերտական խորհուրդը իր մեջ րնդգրկում է բարձր վարք և առաջադիմություն ունեցող*

<p><i>աշակերտների, որոնք իրենց օգնությունն են ցուցաբերում ծագած վիճահարույց հարցերին ժամանակին դրական լուծում տալու համար: Նրանք պարտաճանաչ կերպով մասնակցում են արտադասարանային և արտադպրոցական միջոցառումներին:</i></p> <p>4. Ռեսուրսներով ապահովվածություն</p> <ul style="list-style-type: none"> • <i>Հարուստ ուսումնականության բազայի առկայություն</i> • <i>Կրթական գործընթացի բաղկացուցիչ մաս հանդիսացող գրադարան</i> • <i>Համակազմային կենտրոնի առկայություն</i> • <i>Ռեսուրսների ապահովվածությունը բավարար է</i> 	<ul style="list-style-type: none"> • Ռեսուրսների ապահովվածությունը կախված է երկրի սոցիալական վիճակից • Առարկայական կաբինետների սարքավորումներով և անհրաժեշտ ուսումնազննակն դիտակտիկայով հազեցնելու ֆինանսական միջոցների անբավարարություն
<p>5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ հաջողությունները</p> <ul style="list-style-type: none"> • <i>Եռահերթ ուսուցուից անցումը միահերթ ուսուցման</i> • <i>Մասնագիտական կողմնորոշմանը նպաստող դասարանների ստեղծում</i> • <i>Դպրոցական գույքի ձեռքբերում</i> • <i>Ուսուցիչների համար հնարավորություն է ստեղծված ուսուցչանոցում աշխատել matyan.emis.am կայքում:</i> 	<p>5. Նոր նախաձեռնությունների ուղղությամբ թույլ կողմերը</p> <p>-----</p>
<p>6. Հաղորդակցության, համագործակցության ուժեղ կողմերը</p> <ul style="list-style-type: none"> • <i>Համացանցով այլ դպրոցների հետ կապը</i> 	<p>6. Հաղորդակցության, համագործակցության թույլ կողմերը</p> <p>-----</p>

<ul style="list-style-type: none"> • Համատեղ պլանավորման հնարավորությունը <p>7. Բյուջեի ֆինանսական միջոցների հետ կապված հաջողությունները</p> <ul style="list-style-type: none"> • Սովորողների թվաքանակի շեշտակի աճ • Պետբյուջեյից ստացվող գումարները բավարարում են դպրոցի ընթացիկ ծախսերին 	<p>7. Բյուջեի ֆինանսական միջոցների հետ կապված խնդիրներն ու դժվարությունները</p> <p>Ֆինանսական միջոցները սակավ են այլ նախաձեռնությունների համար:</p> <p>օրինակ «Արմաթ» աշխատարան-լաբորատորիայի հիմնան համար:</p>
<p>Հնարավորություններ</p> <ul style="list-style-type: none"> • Շրջապատում դպրոցն ունի հեղինակություն, որովհետև ուսուցիչները աշխատում են անմնացորդ, մեծ նվիրումով և ժամանակակից պահանջներին համապատասխան: <p>Բոլոր ուսուցիչները ճիշտ ժամանակին ատեստավորվել և հավաստագիր են ստացել:</p> <ul style="list-style-type: none"> • Ներառական կրթություն • Խմբակներ • Երկարօրյա պարապմունք • Ազգային երգ ու պար • <u>Լրացուցիչ ծառայություններ, ինչը և կգրավի սովորողներին</u> 	<p>Վտանգներ</p> <ul style="list-style-type: none"> • Երկրի արտագաղթը իր բացասական ազդեցությունն է թողնում • Բացասաբար է ազդում նաև ՀՀ տարածքային ամբողջականության վտանգված լինելու վիստր:

Հավելված 2. Հարցումների իրականացման առաջարկվող մեթոդաբանություն

Ուսումնական հաստատության գործունեության ինքնավերլուծությունը կատարելիս մի շարք ցուցանիշներին և չափանիշներին համապատասխանության գնահատման համար

անհրաժեշտ է իրականանցնել հարցումներ: Առաջարկվում է հարցումների ստորև նկարագրված մեթոդաբանությունը:

- Հաստատության կողմից ինքնավերլուծություն կատարելիս հարցման մեթոդն օգտագործվում է, երբ ցուցանիշների և չափանիշների աղյուսակում տվյալ ցուցանիշի կամ չափանիշի գնահատման մեխանիզմ սյունակում նշված է «հարցում» բառը: Հարցումը առավել տարածված սոցիոլոգիական հետազոտության մեթոդներից է: Հարցման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հետազոտության ժամանակ կարևորը ընդհանրական պատկերի սասցումն է, այլ ոչ թե առանձին հարցվողի տեսակետը: Սրանով հարցման մեթոդը տարբերվում է հարցազրույցից, երբ կարևոր է հենց հարցազրույց տվող անձի տեսակետը:
- Հարցումներն անցկացվում են տվյալների հավաքման և վերլուծության նպատակով՝ նախապես մշակված հարցաթերթիկների միջոցով (անկետավորում): Հարցաթերթիկը կառուցված է.
 - նախաբանից, որտեղ համառոտ նշվում է հարցման նպատակն ու խնդիրները,
 - ում կողմից է ահցկացվում հարցումը (տվյալ դեպքում հաստատության տվյալները),
 - հարցաթերթիկի լրացման կանոններից, որտեղ նշվում է, թե ինչպես պետք է լրացնել հարցաթերթիկը,
 - բուն հարցաշարից, որտեղ նշվում են հարցման թեմային վերաբերվող հարցերը
 - անձնագրային մասից, որտեղ նշվում է հարցվողի սեռը, տարիքը, կրթությունը և ըստ անհրաժեշտության այլ անձնական տվյալներ:
- Հարցերը լինում են բաց, փակ, և կիսափակ: Բաց հարցերը չեն ենթադրում պատասխանների տարբերակների առկայություն: Փակ հարցերի պարագայում պատասխանները նախօրոք նախատեսված և բերված են հարցաթերթիկում՝ հնարավորություն տալով հարցվող անձին ընտրել պատասխանը հնարավոր տարբերակներից: Կիսափակ հարցերը թույլ են տալիս նշել սեփական պատասխանը, եթե առաջարկված ոչ մի պատասխանի հետ հարցվողը համաձայն չէ: Կիսափակ, ինչպես և բաց հարցերը ավելի դժվար է մշակել, քան փակ հարցերը, քանի որ անձնական կարծիք արտահայտող պատասխանները անհրաժեշտ է խմբավորել և կոդավորել:
- Ուստի հաստատությանը խորհուրդ է տրվում բացառել բաց հարցերը և օգտագործել միայն փակ հարցեր: Խիստ սահմանափակ դեպքերում, երբ շատ կարևոր է հարցվողների տեսակետը կամ մեկնաբանությունը կարելի է հարցաթերթիկում ընգրկել նաև կիսափակ հարցեր:
- Հարցումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվում է խմբավորել հարցում պահանջող ցուցանիշները և չափանիշները՝ ըստ

հարցվողների խմբերի (օրինակ ուսուցիչներ, սովորողներ, ծնողներ և այլն) և յուրաքանչյուր խմբի համար կազմել մեկ հարցաթերթիկ՝ ներառելով այդ խմբին վերաբերող բոլոր ցուցանիշներին և չափանիշներին վերաբերող հարցերը:

- Առաջարկվում է հարցաթերթիկներում ներառել առավելագույնը 5 հարց: Հարցերը անհրաժեշտ է ձևակերպել այնպես, որ հաստատության համապատասխանությունը տվյալ ցուցանիշին կամ չափանիշին լավագույնս բացահայտվի: Օրինակ՝ հարցի դասական ձևակերպումը կարող է սկսվել «Համաձայն ե՞ք, որ...» (շարունակությունը կազմում է հարցի բովանդակությունը), իսկ հաճախ օգտագործվող տիպային պատասխանները՝ «Այո, ավելի շուտ այո, ավելի շուտ ոչ, ոչ, չեմ կարող պատասխանել, տեղյակ չեմ»: Կարող են օգտագործվել նաև այլ հարցադրումներ և պատասխաններ. օրինակ՝ «Որքա՞ն հաճախ եք դուք...», «Որքանով կամ ինչ չափով ե՞ք դուք բավարարված...», «Որաքնո՞վ է նպաստել...» (շարունակությունը կազմում է հարցի բովանդակությունը):
- Հարցաթերթիկում կարող են ներառվել նաև դիրքորոշում կամ վերաբերմունք արտահայտող պատասխաններ ունեցող հարցեր: Օրինակ՝ «Ծնողական և աշակերտական խորհուրդների համագործակցությունը» չափանիշի վերաբերյալ կարելի է տալ հետևյալ հարցը, «Ինչպիսի՞ն է հաստատության ծնողական և աշակերտական խորհուրդների միջև համագործակցությունը»: Այս հարցի հնարավոր պատասխանները կարող են լինել հինգը, որոնցից յուրաքանչյուրն ամրագրում է հարցի վերաբերյալ հնարավոր դիրքորոշումներից մեկը.
 - ծնողական և աշակերտական խորհուրդները սերտորեն համագործակցում են,
 - ծնողական և աշակերտական խորհուրդները համագործակցում են անհրաժեշտության դեպքում,
 - ծնողական և աշակերտական խորհուրդները որոշ դեպքերում համագործակցում են, սակայն այդ համագործակցությունը բավարար մակարդակի վրա չ
 - ծնողական և աշակերտական խորհուրդները չեն համագործակցում,
 - այլ (հարցվողի պատասխանը)
- Որակյալ և արժանահավատ հարցում իրականացնելու համար անհրաժեշտ է պահպանել հարցեր կազմելու հետևյալ կանոնները.
 - պահպանել էթիկական նորմերը և ապահովել անձնական բնույթի տեղեկատվության կոնֆիդենցիալությունը (գաղտնիությունը), որպեսզի հարցվողները չմտահոգվեն հարցերին ճիշտ պատասխանելու հնարավոր հետևանքներից և լինեն անկեղծ,
 - հարցաթերթի յուրաքանչյուր հարց պետք է պարունակի միայն մեկ հարցադրում. օրինակ՝ «Որքանով եք դուք բավարարված ուսուցչի գիտելիքներից և դասավանդման հմտություններից» հարցը պարունակում է

միաժամանակ 2 հարցադրում և փորձում է բացահայտել թե՛ ուսուցչի գիտելիքները, թե՛ դասավանդման հմտությունները.

- հարցաթերթի յուրաքանչյուր հարցպետք է ներառի պատասխանի բոլոր հնարավոր տարբերակները և ապահովի պատասխանների տարատեսակություն.
- հարցաթերթի յուրաքանչյուր հարցի պատասխանների տարբերակները պետք է լինեն փոխբացառող և ապահովեն իմաստային տեղեկատվության տրամադրում, որպեսզի հարցվողը չտարակուսի որն ընտրել և ունենա միայն մեկ ընտրություն. Օրինակ՝ «Որտեղ եք դուք մեծացել».

ա) Հայաստանում

բ) Քաղաքում

գ) Գյուղում

հարցը ստեղծում է տարակուսանք, քանի որ պատասխանները փոխբացառող չեն. թե՛ քաղաքում, թե՛ գյուղում մեծացած անձը կարող է ընտրել 2-ական պատասխան՝ համապատասխանաբար ա) և բ) կամ ա) և գ), իսկ ստացվող տեղեկություններն օգտակար չեն:

- Հարցաթերթիկում հարցերը համարակալվում են: Լրացված հարցաթերթիկների մշակումը կատարվում է համակարգչի միջոցով՝ համապատասխան ծրագրով (օրինակ՝ Excel): Հարցերի պատասխաններն իրենց հերթին համարակալվում են: Հարցման արդյունքների մշակման, պատասխանների մուտքագրման համար հարցերի հերթական համարները հարցաթերթիկում կարող են ընդունվել որպես այդ հարցերի կոդեր, իսկ հարցերի պատասխանների համարները՝ որպես պատասխանների կոդեր: Յուրաքանչյուր լրացված հարցաթերթիկ ևս համարակալվում է:
- Լրացված հարցաթերթիկների տվյալները մուտքագրվում են ընտրված համակարգչային ծրագրով և ստեղծվում է տվյալների բազա: Բազայում մուտքագրվում են հարցերը և պատասխանները՝ իրենց համապատասխան կոդերով: Այսպիսով, մուտքագրման արդյունքում ստացվում են թվեր, որոնք կարելի է կարդալ որպես օրինակ՝ 1. 1. 3, այսինքն առաջին հարցվածը առաջին հարցին տվել է երրորդ պատասխանը: Մեր վերը բերված օրինակի համար սա նշանակում է, որ առաջին հարցվածը ընտրել է «ճնողական և աշակերտական խորհուրդները որոշ դեպքերում համագործակցում են, սակայն այդ համագործակցությունը բավարար մակարդակի վրա չէ» պատասխանը: Բոլոր տվյալների մուտքագրումից հետո կատարվում է հաճախությունների հաշվարկ, ինչը թույլ է տալիս տեսնել, թե ինչպես են բաշխվել հարցվածների կարծիքները ըստ հարցաթերթիկում տրված պատասխանների տարբերակների:
- **Հարցվողների ընտրանքը** կազմելու, այսինքն՝ **հարցման ենթակա անձանց որոշելու** համար, առաջին հերթին անհրաժեշտ է որոշել հարցման ենթակա շահառու

անձանց խումբը (սովորողներ, ուսուցիչներ և այլ): Այնուհետ հարցման կարևոր փուլ է՝ տվյալ շահառու խմբի անձանց ամբողջ բազմությունից հարցման ենթակա անձանց ընտրությունը կամ, այլ կերպ ասած, հարցվողների ընտրանքի կազմումը: Օրինակ՝ հաստատության բոլոր ուսուցիչներից հարցվող ուսուցիչների ընտրությունը՝ այն ուսուցիչների ընտրությունը, ովքեր պետք է լրացնեն հարցաթերթը:

- Հարցման ընտրանքի կազմման համար առաջարկվում է կիրառել **պատահական ընտրանքի մեթոդը**: Ստատիստիկայում **պարզ պատահական ընտրանքը** դա այն անձանց փոքր խումբն է, ովքեր ընտրվել են անձանց ավելի մեծ բազմությունից: Ընդ որում, յուրաքանչյուր անձ այդ փոքր խմբում ընտրվել է պատահականորեն: Դա նշանակում է, որ ընտրանքի կազմման ժամանակ յուրաքանչյուր անձ ունի ընտրանքում ընդգրկվելու հավասար հավանականություն: Պարզ պատահական ընտրանքի մեթոդն ունի ակնհայտ առավելություններ: Այս մեթոդը շատ հեշտ է ու հասկանալի, իսկ հետազոտության արդյուքները կարելի է տարածել ուսումնասիրվող շահառու խմբի ամբողջ բազմության վրա: Ամենից կարևորն այն է, որ լիովին պահպանվում է պատահականության սկզբունքը, ինչը թույլ է տալիս խուսափել սխատեմատիկ սխալներից:
- Պատահական ընտրանքի մեթոդով ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը, որոշելու համար առաջարկվում է օգտագործել ընտրանքի հաշվարկման պարզեցված բանաձևը:
- Հաստատություններին որպես օգնություն ստորև աղյուսակում 33-ում տրված է պատահական ընտրանքի պարզեցված բանաձևով հաշվարկված ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը, տարբեր բազմությունների համար (հաշվարկը արված է պատահական ընտրանքի հիման վրա՝ 95 տոկոս ներկայացուցչականության պարագայում, 5% վստահելի միջակայքի պայմաններով)։

Աղյուսակ 33.

Հարցման բազմություն	Ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը
Մինչև 100	80
101-300	169
301-500	217
501-700	248
701-1000	278
1001 և ավելի	302

- Ընտրանքի չափը՝ հարցվողների թիվը, որոշելուց հետո անհրաժեշտ է որոշել, թե ինչպես ընտրել հարցվող անձանց, օրինակ՝ ինչպես հաստատության 100 սովորողներից ընտրել հարցվող 80 սովորողին: Պատահական ընտրանքի պարագայում կարելի է օգտագործել տարբեր մեթոդներ, օրինակ՝ **վիճակահանություն կամ պատահական թվերի աղյուսակ**: Վիճակահանության դեպքում է հարցման ենթակա շահառու խմբի անձանց ամբողջական բազմության յուրաքանչյուր անձի տվյալները գրվում են առանձին թղթիկի վրա, այնուհետ բոլոր թղթիկները դրվում են ինչ-որ արկղի կամ տուփի մեջ, դրանք խառնում են և այդ տուփից առանց նայելու հանվում են հարցվողների թվին հավասար թղթիկներ: Օրինակ՝, եթե հաստատությունն ունի 500 սովորող, ապա համաձայն Աղյուսակ 33-ի հարցվող սովորողների թիվը պետք է կազմի 217: 500 սովորողից յուրաքանչյուրի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, դասարան) գրվում է առանձին թղթիկի վրա: Այնուհետև բոլոր 500 թղթիկները դրվում են որևէ տուփի մեջ, խառնվում և հավում է 217 թղթիկ: Այդ 217 թղթիկների վրա գրված սովորողների տվյալներով որոշվում են հարցվող սովորողները:
- Հարցվող անձնաց կարելի է ընտրել նաև **մեխանիկական ընտրության մեթոդով**: Այդ նպատակով նախ կազմվում է հարցման ենթակա շահառու խմբի անձանց ամբողջական ցանկը (անուն, ազգանուն, հեռախոս և այլն): Այդ ցանկից հավասար պարբերականությամբ/միջակայքով ընտրվում են համապատասխան թվի հարցվողներ: Այդ միջակայքը կոչվում է ընտրանքի քայլ: Ընտրանքի քայլը հավասար է հարցման բազմությունը բաժանած հարցվողների թվին:

Ընտրանքի քայլ= N/n , որտեղ

N -ը հարցման բազմությունն է, իսկ n -ը հարցվողների թիվը:

Օրինակ, եթե 500 սովորողից պետք է հարցվեն 217-ը, ապա հարցման քայլը հավասար է $2.3=500/217$: Սա նշանակում է, որ 500 սովորողների ցանկից պետք է ընտրվի յուրաքանչյուր 2-րդը: Ընտրության սկիզբը որոշվում է պատահականության սկզբունքով՝ ընտրանքի քայլի շրջանակներում: Օրինակ՝, եթե ընտրանքի քայլը հավասար է 5-ի, ապա ընտրությունը պետք է սկսել 1-ից 5 միջակայքում ցանկացած թվից:

Յուրաքանչյուր հարցում իրականացնելիս ուղղորդվել ենք հավելված 2-ում առկա ցուցումներով: Հարցման արդյունքների մշակումը հիմնավոր բաղադրիչ է հանդիսանում հաջորդ՝ 2022–2023 ուստարում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրի կազմման համր: